Երևանի քաղաքապետ՝
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԻՆ

«Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի լիազորված անձ
Հայաստանի Հանրապետության քաղաքացի Էդուարդ Հովհաննիսյանից

ԻՐԱԶԵԿՈՒՄ
/հանրային հավաքի անցկացման վերաբերյալ/

Հարգելի՛ պարոն Ավինյան,

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 9-14-րդ հոդվածների պահանջներով, իրազեկում եմ, որ անցկացնելու եմ հանրային հավաք՝ հանդես գալով որպես կազմակերպիչ:

Ստորև ներկայացնում եմ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով իրազեկմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը՝

1. Հավաքի վայրը, հավաքի սկզբի և ավարտի ժամանակը՝

   Ա) 16.05.2026թ., ժամը՝ 18:30-21:00- Հայաստան, Երևան, Նոր Նորք, Գայի արձանի շրջակայքում,

   Բ) 18.05.2026թ., ժամը՝ 18:30-21:00- Հայաստան, Երևան, Էրեբունի, Էրեբունի թանգարան՝ Էրեբունի փող. 38,

   Գ) 20.05.2026թ., ժամը՝ 19:00-21:00- Հայաստան, Երևան, Աջափնյակ, Բուենոս Այրեսի այգի,

   Դ) 22.05.2026թ., ժամը՝ 19:00-21:00- Հայաստան, Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Սվաճյան փող. Սուրբ Երրորդություն եկեղեցու բակ,

   Ե) 24.05.2026թ., ժամը՝ 19:00-21:00- Հայաստան, Երևան, Ավան, Խուդյակով փողոցի հրապարակ՝ Էվրիկա սուպերմարկետի դիմաց,

   Զ) 27.05.2026թ., ժամը՝ 19:00-21:00- Հայաստան, Երևան, Դավթաշեն, Դավթաշեն 1-ին և 2-րդ թաղամասերի միջև գտնվող կենտրոնական այգի, 1700 ամյակի խաչքարի մոտ

   Է) 29.05.2026թ., ժամը՝ 19:00-21:00- Հայաստան, Երևան, Քանաքեռ - Զեյթուն, Պարույր Սևակ-Դրո խաչմերուկ,

Ը) 01.06.2026թ., ժամը՝ 19:00-21:00- Հայաստան, Երևան, Արաբկիր, Մերգելյան այգի:
Ընդ որում հավաքի իրականացման ընթացքում հնարավոր են հարակից փողոցների երթևեկության սահմանափակումներ (Հանրային հավաքի ընթացքում օգտագործվելու է բեմահարթակ, որի նախապատրաստական աշխատանքները սկսվելու են յուրաքանչյուր հավաքից մեկ օր շուտ)

2. Հավաքի նպատակը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հունիսի 7-ի կայանալիք ընտրությունների ներքաղաքական և նախընտրական հարցերի քննարկում:

3. Մասնակիցների սպասվող թիվը յուրաքանչյուր հավաքին՝

Ա) Նոր Նորք- շուրջ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ անձ,

Բ) Էրեբունի- շուրջ 500 /հինգ հարյուր/ անձ

Գ) Աջափնյակ-շուրջ 800-1000 /ութ հարյուրից հազար/ անձ

Դ) Մալաթիա-Սեբաստիա- շուրջ 1000-4000 /տասը հազարից չորս հազար/ անձ

Ե) Ավան- շուրջ 1000 /տասը հազար/ անձ

Զ) Դավթաշեն- շուրջ 500 /հինգ հարյուր/ անձ

Է) Քանաքեռ – Զեյթուն- շուրջ 2000-2500 /երկու հազարից երկու հազար հինգ հարյուր/ անձ

Ը) Արաբկիր- շուրջ 1000 /հազար/ անձ

4. Հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները՝ Հավաքների ազատության սահմանադրական իրավունքի իրացման ամենաարդյունավետ և նույնիսկ հենց Սահմանադրությամբ հիշատակված բացօթյա տարածքում տվյալ դեպքում իրազեկման ենթակա հավաքը իրացվելու է նաև անհրաժեշտ սարքավորումների ապահովմամբ՝ դրանով հավաքի կազմակերպվածության երաշխավորմամբ: Մասնավորապես հնարավոր է տեղադրվի՝ բեմահարթակ, կոնստրուկցիաներ, բարձրախոսներ, ձայնի ուժեղարարեր, թմբուկներ, լեդ էկրան, տրանսպորտային միջոցներ, էլեկտրասնուցման համար անհրաժեշտ մալուխ և այլ տեխնիկական սարքեր: Հնարավոր է տեղի ունենան ելույթներ, հնչի հանրային խոսք

6. Հավաքին կարգադրիչներ չեն լինի:

7. Հավաքի կազմակերպչի տվյալները՝

Ա) Նոր Նորք- Ազգանուն Անուն Հայրանուն՝ Արշավիր Խաչատրյան Ռոբերտի,

Բ) Էրեբունի- Ազգանուն Անուն Հայրանուն՝ Գագիկ Գալստյան Հրաչյայի

Գ) Աջափնյակ- Ազգանուն Անուն Հայրանուն՝ Հայկ Ավագյան Դավիթի,

Դ) Մալաթիա-Սեբաստիա- Ազգանուն Անուն Հայրանուն՝ Հազարապետ Մկրտչյան Միշայի,

Ե) Ավան-Ազգանուն Անուն Հայրանուն՝ Բակունց Միքայել Հրաչիկի,

Զ) Դավթաշեն- Ազգանուն Անուն Հայրանուն՝ Մարտիրոսյան Հայկ Վլադիմիրի,

Է) Քանաքեռ – Զեյթուն- Ազգանուն Անուն Հայրանուն՝ Տոնոյան Արա Հրաչյայի,

Ը) Արաբկիր-Ազգանուն Անուն Հայրանուն՝ Կարապետյան Հրայր Կիրակոսի,

«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հավաքի իրագեկման մեջ նշված ժամանակում և վայրում այլ, ներառյալ՝ հակադարձ ուղղվածությամբ հավաքի անցկացումն ինքնին հիմք չէ հավաքի նկատմամբ սահմանափակումների սահմանելու համար, եթե չկա դրանց մասնակիցների բախման անմիջական վտանգ: Տվյալ դեպքում ըստ ունեցած նախնական տվյալների այդ օրը նախատեսված չէ որևէ այլ անձի կողմից համապատասխան վայրում հանրային հավաք:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Երևանի քաղաքապետի լիազոր ներկայացուցչի 05.05.2026 թվականի որոշմամբ ի գիտություն է ընդունվել ՀՀ քաղաքացի Ալեքսան Ալեքսանյանի կողմից ս.թ. հունիսի 3-ին՝ ս.թ. ժամը 17.30-22.00 Հանրապետության հրապարակի՝ Երևանի 2750-ամյակի այգուն հարող հատվածում հավաքի և հավաքի ընթացքում՝ ժ.19.30-21.30 Հանրապետության հրապարակի՝ Երևանի 2750-ամյակի այգուն հարող հատվածից՝ Նալբանդյան փողոց - Սայաթ-Նովայի պողոտա - Մաշտոցի պողոտա - Ամիրյան փողոց - Հանրապետության հրապարակի՝ Երևանի 2750-ամյակի այգուն հարող հատված երթուղով երթի անցկացումը:

Ինչպես արդեն տեղեկացրել ենք՝ վերոնշյալ հավաքի անցկացման նպատակով կառուցվելու է բեմահարթակ, որի ապամոնտաժման աշխատանքները կիրականացվեն մինչև հունիսի 4-ը ներառյալ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Կից ներկայացնում եմ իմ և կազմակերպիչների անձը հաստատող փաստաթղթերի լուսապատճենը և դաշինքի լիազոր ներկայացուցիչ հանդիսանալու փաստը հաստատող փաստաթղթի՝ վկայականի լուսապատճենը:

«Ուժեղ Հայաստան» կուսակցությունների
դաշինքի լիազորված անձ՝
Էդուարդ Հովհաննիսյան _____